

ՄԱՍ-ԱՄԲՈՂՋ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՈՀԱՐ ՆԵՐՄԵՍՅԱՆ

Հոդվածում դիտարկվում են աշխարհաճանաչողության հիմնարար հասկացություններից համարվող *մասի* և *ամբողջի* փիլիսոփայական կարգերի լեզվական դրսևորումները: Վերջիններս բնորոշվում են իրենց բարդ բնույթով և պայմանավորված են ոչ միայն լեզվական համակարգերի և դրանց տարրերի հարաբերակցության խնդիրներով, այլև սույն լեզվատարրերի կանոնակարգման և համապատասխան համակարգերի մեջ կարգադասամբ: Անդրադարձ է կատարվում լեզվական տեղաշարժերի օրինաչափությունների ըմբռնման հիմքում դրված ամբողջացման և տարանջատման գործընթացներին, որոնք տարրերի հարացույցային ու շարույթային զուգորդումների արդյունք են, ինչպես նաև՝ մաս-ամբողջ հարաբերությունների և *լեզվական մակարդակ* հասկացության սերտ կապին, որի միջոցով միայն կարելի է բացահայտել մաս-ամբողջ կառույցների առանձնահատկությունները՝ իրենց ձևերի ողջ բարդությամբ:

Բանալի բառեր – *կարգադասում, կոգնիտիվ լեզվաբանություն, հոլիզմ, մերիզմ, ամբողջի մաս և տարր, նույնական հատկանիշներ, տարբերակիչ հատկանիշներ, հարացույցային և շարույթային կապեր, լեզվական մակարդակ*

Լեզուն մարդու իմացական-հասկացական գործունեության ամենաբնորոշ դրսևորումներից է, ուստի և լեզվական միավորների ուսումնասիրության ճանաչողական մոտեցումներն առանձնակի հնարավորություն են ընձեռում պարզելու, թե մարդն ինչպես է բացահայտում իրեն շրջապատող աշխարհը, ինչ սկզբունքներով է համակարգում տարբեր առարկաների բազմազան կապերին ու փոխհարաբերություններին վերաբերող տեղեկույթը: Տրամաբանական է, որ առաջին հերթին հատկապես լեզվագիտական կարգերն են արտացոլում իրական աշխարհի տարատեսակ երևույթներն ու առարկաները՝ արտահայտելով դրանց բնորոշ առնչություններն ու հարաբերությունները: Վերջիններս էլ, բնականաբար, մեր մտածողության մեջ բաժանվում են որոշակի հասկացական կարգերի: Հետևաբար, միանգամայն հիմնավորված է **կարգադասման** (կատեգորիզացիայի)՝ իբրև լեզվաբանական իրողության մասին խոսելը, քանի որ ճանաչողական փորձի կուտակմանը զուգընթաց՝ կարգադասման կատարելագործման առաջնային գործոն դառնում է գլխավորապես լեզվի յուրացման գործընթացը: Հարկ է նշել,

սակայն, որ մարդու կողմից իրականացվող կարգադասման ընդհանուր սկզբունքները հնարավոր է ըմբռնել սոսկ այն պարագայում, եթե հաշվի են առնվում նաև դրա բնական լեզվի ոլորտում ինքնին առաջ եկող և արտահայտվող դրսևորումների յուրահատկությունները:

Լեզուների հետազոտության ճանաչողական մոտեցումները և լեզվական միավորների կարգադասման ընդհանուր սկզբունքներն այսօր լեզվաբանության արդիական ուղղություններից մեկի՝ **կոգնիտիվ** (ճանաչողական) **լեզվաբանության** կարևորագույն միջոցներից են դարձել: Կոգնիտիվ լեզվաբանության առաջացումը պայմանավորված է ոչ միայն առհասարակ լեզվաբանության զարգացման բնականոն ընթացքով, այլև ճանաչողական տարբեր ուսումնասիրությունների և մասնավորապես **կոգնիտիվ գիտության**¹ ձևավորմամբ: Վերջինս տարաբնույթ մի շարք գիտակարգերի ամբողջությունն է և միավորում է գիտական այն հետազոտությունները, որոնք վերաբերում են մտածական գործընթացների կառավարման ընդհանուր սկզբունքներին:

Սկզբնապես ձևավորվելով որպես լեզվագիտական ուսումնասիրությունների մի նոր բնագավառ՝ **կոգնիտիվ լեզվաբանությունը** վերջին տասնամյակներում առանձնացել է կոգնիտիվ գիտությունից՝ իբրև արդի լեզվաբանության ինքնուրույն ոլորտ, և դարձել լեզվաբանական առաջատար ուղղություններից մեկը: Հոգեբանական և լեզվաբանական հետազոտություններ ներառող միջգիտակարգային այս ճյուղի ուսումնասիրության բուն խնդիրները ներկայումս հետևյալն են՝

- լեզվի և գիտակցության փոխհարաբերության հարցերը,
- լեզվի դերն աշխարհի հայեցակարգման և կարգադասման, ճանաչողական գործընթացների և մարդկային փորձի ընդհանրացման գործում,
- մարդու հասկացական առանձին ունակությունների և լեզվի միջև եղած կապերի ու փոխներգործության ձևերի բացահայտումը ևն:

Այլ կերպ ասած՝ կոգնիտիվ լեզվաբանության առանձնակի ուշադրության կենտրոնում այն խնդիրն է, թե լեզվական ձևերը ինչպիսի կապերով են առնչվում մարդկային փորձի ու գիտելիքների կառուցվածքին, և թե ինչպես են դրանք արտացոլվում ու ներկայանում մարդու գիտակցության մեջ:

Այս մոտեցմամբ լեզուն հանդես է գալիս որպես մտածողական

¹ **Կոգնիտիվ** (ճանաչողական) գիտությունը (լատ.՝ *cognitio*՝ «ճանաչում») զբաղվում է մարդու բանականության, մտածողության, նրա ճանաչողական (կոգնիտիվ) ունակություններով պայմանավորված գործընթացների, մարդկանց ու կենդանիների վարքագծի կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությամբ: Այն ներառում է հոգեբանության, կարդաբանության, համակարգչային գիտության, լեզվաբանության, փիլիսոփայության, մարդաբանության և այլ գիտությունների մի շարք ոլորտներ՝ հանդես գալով որպես բնության և մարդկային մտածողության փոխհարաբերությունները քննող մի ամբողջական լայնածավալ գիտություն: Կոգնիտիվ մոտեցումների հիմնական առանձնահատկությունն այն է, որ վարքագծի կարգավորման գործընթացում հատկապես շեշտադրվում և կարևորվում է գիտելիքների որոշիչ դերը: Այս մասին մանրամասն տե՛ս «Большая российская энциклопедия», М., 2004-2017; **Величковский Б. М.** Когнитивная наука: основы психологии познания, М., 2006; **Болдырев Н. Н.** Язык и система знаний. Когнитивная теория языка, М., 2018:

գործընթացների դրսևորման **գործիք**, տեղեկույթի յուրօրինակ համակարգման և փոխակերպման **ճանաչողական մեխանիզմ**։ չէ՞ որ հատկապես լեզվի մեջ և լեզվի միջոցով են ամրակայվում մարդկության փորձը, նրա մտածողությունը։ Ուստի միանգամայն օրինաչափ է, որ լեզուն ոչ միայն հանդես է գալիս որպես ճանաչողության մեխանիզմ, այլև դառնում է կոգնիտիվ լեզվաբանության ուսումնասիրության հիմնական առարկան։ Առավելապես այս հիմունքով է, որ կոգնիտիվ լեզվաբանությունն առհասարակ առանձնանում է կոգնիտիվ գիտությունից՝ իբրև լեզվաբանական ինքնուրույն ոլորտ²։ Հատկանշական է, որ ի համեմատություն կոգնիտիվ այլ գիտությունների (որոնք գիտակցությունը քննում են իրենց ոլորտներին բնորոշ նյութին համապատասխան)՝ լեզվաբանության այս ոլորտի յուրահատկությունը պայմանավորված է գերազանցապես նրա ուսումնասիրության առարկայով, այն է՝ գիտակցությունն այս պարագայում քննվում է գլխավորապես ու բացառապես **լեզվական նյութի** հիման վրա։

Այսպիսով, կարելի է հաստատել, որ ճանաչողական (կոգնիտիվ) լեզվաբանության ուսումնասիրության առարկան լեզուն է՝ որպես իմացաբանության միջոց և կառուցվածք, իսկ վերջնական նպատակը՝ բանականության գործունեությանը վերաբերող սովյալների ձեռքբերումը, համակարգումն ու քննությունը³։

Արդեն նշել ենք, որ կոգնիտիվ լեզվաբանության կարևորագույն խնդիրը մարդու ճանաչողական մտածողության և լեզվական իմացության միջև առկա առնչությունների պարզաբանումն է։ Հայտնի փաստ է, որ մարդու իրականության վերաբերյալ պատկերացումները սկզբնապես ձևավորվում են նրա նյութական-առարկայական գործունեության ընթացքում և հետո միայն տարածվում իրերի և զանազան իրողությունների վրա։

Մարդկային աշխարհաճանաչողության առանցքային հասկացությունների շարքում այս առումով բավականին ուշագրավ են **մասի** և **ամբողջի** փիլիսոփայական կարգերը (կատեգորիաները), որոնք արտահայտում են առարկաների որոշակի ամբողջության և այդ ամբողջությունը կազմող առանձին առարկաների հարաբերությունները։ Ընդ որում, հիշյալ առնչությունները մարդկային կենսափորձից անկախ են դրսևորվում և ամենից հաճախ էլ հանդես են գալիս հենց **մաս-ամբողջ**

² Ժամանակակից կոգնիտիվ լեզվաբանության մեջ առանձնագվում են հետևյալ բաժինները՝ կոգնիտիվ **իմաստաբանություն** (որն զբաղվում է առաջին հերթին բառալին իմաստաբանությամբ), կոգնիտիվ **քերականություն** (որն զբաղվում է մասնավորապես շարահյուսությամբ, ձևաբանությամբ և քերականությանն առնչվող լեզվաբանական այլ ոլորտներով), կոգնիտիվ **հնչույթաբանություն**։

³ Տե՛ս **Սերգեյ Ս. Սերբին** **И. А. Когнитивная лингвистика**, М., 2007; **Введение в когнитивную лингвистику** (Отв.ред. М.В.Пименова), Кемерово, 2005; **Кобрина Н. А.** Когнитивная лингвистика: истоки становления и перспективы развития, Тамбов, 2000; **Дзюба Е. В.** Когнитивная лингвистика, Екатеринбург, 2018; **Скребицова Т. Г.** Когнитивная лингвистика (курс лекций), СПбГУ, 2011։

փոխհարաբերությամբ⁴:

Մարդը դեռևս վաղնջական ժամանակներից վարժվել է առանձնացնել շրջակա աշխարհի առարկաները, իսկ այդ առարկաների մեջ նաև դրանք կազմող տարրերը. այսպես՝ յուրաքանչյուր ոք պատկերացնում է, որ բազմությունը բաղկացած է առանձին մարդկանցից, իսկ նրանցից ամեն մեկի մարմինն իր հերթին կազմված է տարբեր մասերից՝ գլուխ, ուսեր, մեջք, իրան, վերջույթներ ևն, կամ՝ անտառը տարատեսակ ծառերի մի ամբողջություն է, որտեղ ամեն մի ծառ ունի արմատներ, բուն, սաղարթ, ճյուղեր ևն: Պատահական չէ, որ *մաս* և *ամբողջ* հասկացությունները փիլիսոփայության մեջ ի հայտ են գալիս արդեն իսկ ուսմունքների ձևավորման սկզբնաշրջանում: Դրսևորվելով իբրև ճանաչողական գործընթացի հիմնական հասկացություններ *մասը* և *ամբողջը* սերտորեն շաղկապվում են միմյանց և մեկը մյուսի միջոցով են բնորոշվում. մասն ինչ-որ ամբողջի տարրն է, իսկ ամբողջը համապատասխանաբար կազմված է մասերից:

Տրամաբանական տեսակետից *մաս - ամբողջ* փոխհարաբերությունները բազմատեսակ են ու տարակերպ արտահայտություններով են հանդես գալիս: Իզուր չէ, որ դեռևս անտիկ շրջանում Արիստոտելն արդեն անդրադարձնում է այս հասկացություններին («Մետաֆիզիկա»)՝ տալով դրանց առաջին սահմանումներն ու մանրամասն մեկնաբանություններ*:

* **Օսնություն:** Հիշյալ բնութագրությունները բավականաչափ հետաքրքրաշարժ են, և թերևս ավելորդ չի լինի դրանք համառոտ ներկայացնել ստորև: Ըստ Արիստոտելի բնորոշման *մաս* կարելի է անվանել

- այն, **ա)** ինչը ստացվում է որոշակի քանակություն այս կամ այն կերպ բաժանելու հետևանքով, կամ այն, ինչն առանձնացվում է այդ քանակությունից իբրև նրա մի հատվածը (օր. 2-ը ինչ-որ առումով 3-ի մի մասն է). **բ)** մեկ այլ մոտեցմամբ՝ *մաս* կարող է կոչվել սոսկ այն, ինչը ծառայում է իբրև չափի միավոր. այդ պատճառով էլ 2-ը մի իմաստով 3-ի մասն է կազմում, մեկ այլ իմաստով՝ ոչ.

- այն, ինչի կարելի է բաժանել **տեսակը**՝ հաշվի չառնելով վերջինիս քանակը. պայմանավորված այս հանգամանքով՝ տեսակները կոչվում են **սեռի** մասեր.

- այն, ինչի բաժանվում է կամ ինչից բաղկացած է **ամբողջը** կամ

⁴ Լեզվագիտական կարգերը նկատելիորեն զանազանվում են հասկացական կարգերից, քանի որ վերջիններիս բովանդակությունն արտահայտելու համար հաճախ լեզվագիտական տարբեր կարգեր են պահանջվում: Այսպես՝ ժամանակի, տարածության, սեռի, դեմքի, թվի կամ քանակի, ինչպես նաև խոսողի կողմից դրսևորվող բազմազան վերաբերմունքների ու կարգային այլ հասկացական իմաստներ արտահայտելու համար կիրառվում են լեզվական տարբեր միջոցներ ու կարգեր, և դրանցից յուրաքանչյուրն առանձնակի ձևով է արտացոլում տվյալ իրողության բովանդակությունը: Անհատի լեզվական ունակություններն այս առումով դրսևորվում են իբրև հասկացողության յուրահատուկ գործոններ:

ձևը (կամ այն, ինչը ձև ունի). օր.՝ պղնձե գնդի կամ պղնձե խորանարդիկի համար և պղինձը (այսինքն՝ նյութը, որին ձև է տրված), և խորանարդիկի անկյունը իբրև մաս են դրսևորվում.

• այն, ինչը հանդես է գալիս իբրև ցանկացած առարկա կամ իր բնութագրող սահմանման բաղադրիչ. այդ պատճառով էլ սեռը համարվում է նաև տեսակի մի մասը, չնայած մեկ այլ իմաստով՝ տեսակն է սեռի մասը⁵:

Նույնքան հանգամանալից ու բազմազան են Արիստոտելի՝ *ամբողջին* վերաբերող ըմբռնումները. այսպիսով, նա *ամբողջ* է համարում՝

• այն, ինչի կազմից պակաս չէ որևէ մեկն այն մասերից, որոնցից բաղկացած լինելու շնորհիվ է տվյալ *ամբողջը* դրսևորվում իբրև բնական ամբողջություն.

• այն, ինչն իր պարունակած իրերն այնպես է ընդգրկում, որ վերջիններս որոշակի բնական ամբողջություն են ձևավորում. իսկ դա երկկերպ կարող է լինել. կա մ այն պարագայում, երբ այդ առարկաներից յուրաքանչյուրն իր հերթին առանձին իր է, կա մ էլ այն դեպքում, երբ այդ բոլոր առարկաներից ձևավորվում է մեկ իր:

• Ինչ վերաբերում է սկիզբ, կես և վերջ ունեցող որևէ քանակության (կամ առարկայի, երևույթի), ապա երբ հիշյալ մասերի դասավորությունը որևէ տարբերություն չի առաջացնում այդ քանակության համար, վերջինս կոչվում է *ամբողջություն*, իսկ տարբերություն առաջացնելու դեպքում՝ *ամբողջ*: Քանակությունը, որին բնորոշ են երկուսն էլ, կարող է համարվել և՛ ամբողջ, և՛ ամբողջություն: Նույնը դիտարկվում է նաև այն դեպքում, երբ ինչ-որ բանի դիրքը փոխելիս նրա բնույթն անփոփոխ է մնում, իսկ արտաքին ձևը՝ ոչ, օր.՝ մումը կամ զգեստը (դրանք ևս պետք է համարել և՛ ամբողջ, և՛ ամբողջություն)⁶:

Նշենք, որ փիլիսոփայության մեջ *մաս-ամբողջ* առնչությունների խնդիրը բավականին ընդհանուր ձևակերպմամբ է առաջադրվում. ո՞րն է ավելի հիմնավոր ու ելակետային՝ ամբողջը, թե՞ նրա մասերը: Անտիկ աստմիստներն առաջիններից էին, ովքեր *ամբողջը* հակադրում էին միավորների *պարզ գումարին* այն հիմունքով, որ բացարձակապես անփոփոխ աստմների միևնույն գումարից ամեն անգամ ձևավորվում են *որակապես տարբեր* իրողություններ: Արիստոտելը ևս պնդում էր, որ զանազան ամբողջությունների առաջացման գլխավոր պայմանը *մասերի դասավորությունն ու կապերն* են, մինչդեռ թվաբանական գումարի պարագայում սովորաբար գործում է «գումարելիների տեղերը փոխելիս գումարը չի փոխվում» կանոնը⁷: Եվ այսուհանդերձ, ամբողջի կազմում ո՞րն է կարևորագույնը՝ մասե թը, թե՞ այդ մասերի միջև առկա

⁵ Տե՛ս **Аристотель**, Метафизика, Сочинения, т. 1, М., 1976, էջ 174:

⁶ Տե՛ս նույն տեղը, էջ 175:

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 175-177:

կապերի դրսևորումները: Սույն խնդրի մեկնաբանությունները հանգեցնում են միանգամայն ներհակ դիրքորոշումների, իսկ վերջիններիս ելակետային սկզբունքների հակադրության հետևանքով ձևավորվում են ամբողջությունների մի շարք հակաօրինություններ. այսպես

- ամբողջը պարզապես մասերի գումարն է ↔ ամբողջն ավելին է, քան մասերի գումարը,

- ամբողջը ճանաչվում է մասերի իմացության շնորհիվ ↔ ամբողջի ճանաչումը նախորդում է մասերի իմացությանը,

- մասերը նախորդում են ամբողջին ↔ ամբողջը նախորդում է իր մասերին:

Փիլիսոփայական այն դիրքորոշումը, որի համաձայն ամբողջը (ցանկացած առարկա կամ իրողություն) դիտարկվում է իբրև նրա մասերի գումար, և այդ ամբողջի որակը, հատկանիշները առավելապես պայմանավորված են մասերի քանակով, ստացել է **մերիզմ** անվանումը (հուն. **μερος**՝ մաս): Մերիզմի ելակետը հետևյալն է. քանի որ մասը նախորդում է ամբողջին, ուստի մասերի ամբողջությունը որակապես նոր ոչինչ չի ստեղծում՝ բացի հատկանիշների քանակական ամբողջությունից: Ամբողջը որոշվում է մասերով, այդ պատճառով էլ առարկայի ճանաչումն ամենից առաջ կատարվում է ավելի փոքր մասերի տարանջատման շնորհիվ, հետևաբար տվյալ առարկայի կամ իրողության վերաբերյալ ամբողջական պատկերացումը կարող է ձևավորվել մասերը ճանաչելուց հետո միայն:

Հակադիր տեսակետը, ըստ որի յուրաքանչյուր առարկա (ամբողջություն) օժտված է ներքին անքակտելի հատկանիշներով, որոնք պահպանվում են նույնիսկ այդ առարկան մասերի բաժանելու դեպքում, կոչվում է **հոլիզմ** (հուն. **ἅλως**՝ ամբողջ): Հոլիզմի ելակետը հետևյալն է. ամբողջը միշտ որակապես գերազանցում է իր մասերի հատկանիշները, այսինքն՝ ամբողջն ակնհայտորեն օժտված է նոր հատկանիշներով, որոնք միշտ գոյություն ունեն նրա մասերի որակներից անկախ, և որոնցից զուրկ են նրա կազմի մեջ մտնող մասերը: Այդ ամբողջությունը կազմող տարրերի միջև դրսևորվող կապերի բնույթն օրինաչափ է՝ սահմանելով յուրաքանչյուր մասի համապատասխան տեղը տվյալ ամբողջի կազմում և մասերից ամեն մեկին ամբողջից նոր հատկանիշներ փոխանցելով: Հետևաբար, ճանաչողությունն իրականանում է իբրև առանձին մասերի ճանաչման գործընթաց, որը, սակայն, բացառապես կարող է հիմնավորվել ամբողջի մասին ունեցած գիտելիքով⁸:

Այսպիսով, հոլիզմը մերժում է **ամբողջի**՝ իբրև նրա մասերի սուկական գումար լինելու գաղափարը, և ի համեմատություն այդ մասերի

⁸ Լեզվաբանության մեջ **հոլիզմ** տերմինը նշանակում է խոսքային հաղորդակցում՝ կապակցված արտահայտությունների միջոցով, որոնք տրոհված չեն առանձին բառերի: Հաղորդակցման այդ ձևը, ըստ որոշ գիտնականների, նախորդել է բանական մարդու (homo sapiens) հոդաբաշխ խոսքին և բնորոշ է եղել մասնավորապես նեանդերթալցիներին:

հատկանիշների՝ սույն ամբողջը դիտարկվում է որպես նոր հատկանիշներ ձեռք բերած **ամբողջություն**՝:

Ինչպես երևում է այս համառոտ ակնարկից, *մաս-ամբողջ* հարաբերություններն իսկապես ուշագրավ են և տրամաբանորեն բազմապիսի դրսևորումներ կարող են ունենալ, հետևաբար դրանց մեկնաբանություններն էլ բավականին ինքնատիպ են ու յուրօրինակ: Սույն հետազոտության շրջանակներում, սակայն, նպատակ չունենք հանգամանորեն ներկայացնելու քննվող հասկացություններին վերաբերող փիլիսոփայական տեսակետներն ու բնորոշումները, ավելացնենք միայն, որ *մաս-ամբողջ* փոխկապակցությունների խնդիրը հնագույն ժամանակներից ուսումնասիրության առարկա է դարձել ոչ միայն փիլիսոփայության մեջ, այլև այս կամ այն կերպ առաջ է եկել գիտության տարբեր ոլորտներում և անգամ հասարակական կյանքում: Ուստի վերն ասվածը առավել հիշարժան կարծիքների և մեկնաբանությունների հնարավորինս համառոտ շարադրանքն է, որն անհրաժեշտ ենք համարել *մաս-ամբողջ* հարաբերությունների լեզվական դրսևորումներն ավելի լիարժեք ներկայացնելու համար:

Մաս-ամբողջ փոխառնչությունների բնույթը լեզվում ևս, բնականաբար, բավականին բարդ է և պայմանավորված է ոչ միայն լեզվական համակարգերի (ենթահամակարգերի) ու նրանց կազմի մեջ մտնող տարրերի հարաբերակցության խնդրով, այլև այդ լեզվատարրերի կանոնակարգման և համապատասխան համակարգերի մեջ կարգադասելու հարցերով:

Հայտնի է, որ լեզվաբանության մեջ լեզվական երևույթների ուսումնասիրման երկու տարբեր մոտեցումներ կան: Առաջինի համաձայն՝ որևէ բարդ իրողություն քննելու համար բավական է բաժանել այն առավել պարզ բաղադրիչների և հետազոտել դրանք: Այս մոտեցումը հիմնավորվում է այն համոզմամբ, որ ամբողջը մասերի բաժանելով և դրանց բնորոշ հատկանիշներն ուսումնասիրելով՝ կարելի է համարժեք պատկերացում կազմել ամբողջի բնույթի վերաբերյալ: Սա, թերևս, կիրառելի է պարզ երևույթների քննության ժամանակ, մասնավորապես, ասենք, հնչույթային կամ ձևույթային ենթահամակարգերում: Այս-

⁹ Փիլիսոփայության և գիտության մեջ **հոլիզմը** լայն իմաստով մասի և ամբողջի փոխհարաբերությունների վերաբերյալ հայեցակարգ է, որի ելակետն ամբողջի որակային յուրահատկությունը և գերակայությունն է նրա մասերի նկատմամբ: Նեղ իմաստով իդեալիստական ամբողջականության փիլիսոփայություն է, որը մշակել է հարավաֆրիկյան փիլիսոփա, քաղաքական գործիչ ֆելդմարշալ Յ. Հ. Մմեթսը: Նա է ներմուծել **հոլիզմ** հասկացությունը և տերմինը «Հոլիզմ և էվոլյուցիա» (1926 թ.) գրքում՝ հիմք ընդունելով Արիստոտելի այն միտքը, որ ամբողջն ավելին է, քան նրա մասերի գումարը: Իդեալիստորեն մեկնաբանելով ամբողջի անհանգեցնելիությունը մասերի գումարին՝ Մմեթսը պնդում է, որ աշխարհը կառավարվում է հոլիստական պրոցեսով՝ ստեղծագործական էվոլյուցիայի, նրա ամբողջությունների ստեղծման գործընթացով (տե՛ս Փիլիսոփայական բառարան (Մ. Մ. Ռոզենտալի խմբագր.), Եր., 1975, էջ 255): Տե՛ս նաև *Философский словарь* (под ред. И. Т. Фролова), М., 1981: *Философский энциклопедический словарь*, М., 1983: *Новейший философский словарь* (сост. А. А. Грищанов), Минск, 1998:

պես օրինակ՝ որևէ հնչույթ նկարագրելու համար բավական է այն մասնատել բաղադրող հատկանիշների, և արդյունքում կարող ենք միանգամայն սպառիչ կերպով ներկայացնել տվյալ հնչույթի ամբողջական բնութագիրը (օր. **գ** – պայթական, ձայնեղ, ետնալեզվային, պարզ: Կամ՝ **-յա** ձևույթը մասնատելով **յ** և **ա** հնչույթների՝ պատկերացում ենք ստանում նրա հնչյունական կազմի և ներքին կառուցվածքի մասին):

Լեզվի առավել բարդ համակարգերն ու ենթահամակարգերը, բնականաբար, այլ մոտեցում են թելադրում, քանի որ լեզվական բաղադրյալ միավորների յուրահատկությունները հիմնականում չեն բխում դրանք կազմող բաղադրիչների առանձնահատկությունների պարզ գումարից: Այսպես օր.՝ համեմատենք հետևյալ բառազույգերը՝ *մայրենի, քաղքենի - այծենի, վագրենի - խնձորենի, նոնենի*. նշված բառերը բաժանելով բաղադրիչների՝ նկատում ենք, որ բոլորն էլ նույն կառուցվածքն ունեն *գոյականական արմատ + վերջածանց*, սակայն դրանք կրկին բաղադրելով ըստ բառակազմական կաղապարի՝ համոզվում ենք, որ բառային կամ խոսքիմասային իմաստ արտահայտող տարբեր շարքեր ենք ստանում՝ ա) «մի բան ունեցող, մի բանին հատուկ՝ վերաբերող» ընդհանուր նշանակությամբ ածականներ, բ) «կենդանիների մորթի կամ միս» նշանակությամբ գոյականներ, գ) ծառերի անուններ նշանակող գոյականներ¹⁰: Առաջին զույգ ածականների կոնկրետ հատկանշային իմաստն արտահայտվում է համապատասխան գոյականական բաղադրող հիմքերի միջոցով, մյուս երկու զույգ գոյականների բառիմաստային տարբերությունները պայմանավորված են ոչ միայն գոյականական արմատներով, այլև ածանցային ընդհանուր նշանակությամբ:

Սույն դրույթն ավելի ակնառու է դրսևորվում առավել բարդ կառուցվածք ունեցող լեզվական միավորների, ասենք՝ դարձվածքների ուսումնասիրության ժամանակ: Ինչպես գիտենք, դարձվածքն այնպիսի կայուն բառակապակցություն է, որի բաղադրիչները, վերաիմաստավորվելով տվյալ կապակցության մեջ, զրկվում են իրենց բառային բուն իմաստից և այլ նշանակություն ձեռք բերելով՝ միասնաբար մի նոր՝ այլաբերական-փոխաբերական իմաստ են արտահայտում: Գործնականում, ուրեմն, հնարավոր չէ դրանք առանձնացնելու միջոցով պարզել կապակցության ամբողջական իմաստը, հետևաբար և տվյալ դարձվածքի արտահայտած ընդհանուր իմաստը նրա բաղադրիչների մեխանիկական պարզ գումարը չի կարող լինել¹¹: Օրինակ՝ «*արյունը ջուր դառնալ*» դարձվածքը բաղադրող բառերի իմաստներն առանձին-առանձին որոշելով՝ առանց լրացուցիչ ուսումնասիրության չենք կարող պարզել ամբողջ դարձվածքի բոլոր նշանակությունները՝ 1. «խիստ վա-

¹⁰ Տե՛ս **Ա. Սուքիասյան**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1982, էջ 351:

¹¹ Տե՛ս **Ա. Մարգարյան**, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1990, էջ 302-303: Նան՝ **Գ. Ջահուկյան** և այլք, Հայոց լեզու, գիրք Ա, Եր., 1980, էջ 472-476: **Լ. Եզեկյան**, Հայոց լեզու, Եր., 2005, էջ 196-199:

խենալ, սարսափահար լինել», 2. «ազգակցական ու հարազատական կապը վերանալ», 3. «կոտորածն ու սպանությունը սովորական բան դառնալ», կամ՝ «*ոտքի տակ ընկնել*»՝ 1. «ստորանալ, արհամարհվել, հաշվի չառնվել», 2. «փոքր կամ տկար լինելով՝ խանգարել»¹²:

Այսպիսով, ակներև է, որ մի կողմից լեզվական ցանկացած ամբողջական կառույց կարելի է անդամատել մասերի, մյուս կողմից՝ յուրաքանչյուր բաղադրիչ կարող է հանդես գալ որպես այդ ամբողջի մի մասը, և մեկն անպայմանորեն պայմանավորված է մյուսով: Ուստի առանց մասերի իմացության իրականում անհնարին է հասկանալ ամբողջը, ինչպես և հնարավոր չէ բացահայտել բաղադրիչների նշանակությունը չբացահայտելով այն ամբողջը, որի կազմի մեջ դրանք մտնում են: Ամենից հատկանշականն այն է, սակայն, որ մասերի իմացությունն ամբողջի ճանաչման վերջնական պայման չի դառնում, քանի որ ամբողջը կարող է օժտված լինել այնպիսի յուրօրինակ հատկանիշներով, որոնք ամենևին բնորոշ չեն նրա բաղադրիչներին:

Մաս-ամբողջ փոխհարաբերությունները հիմնովին հասկանալու համար անհրաժեշտ է նաև հստակորեն տարրորոշել *ամբողջի մաս* և *ամբողջի տարր* (բաղադրատարր, կոմպոնենտ) ըմբռնումները: Տարբերակման գլխավոր չափանիշն այս դեպքում լեզվի ողջ կառուցվածքի հետ վերջիններիս դրսևորած առնչությունների բնույթն է: *Մասը*, ըստ էության, ամբողջի բուն, անմիջական բաղադրիչն է, մինչդեռ *տարրը* միջնորդավորված ձևով է հարաբերակցվում ամբողջին: Մասը ձևավորվում է համապատասխան ելակետային տարրերից, որոնք, միմյանց հետ որոշակի կապեր ու հարաբերություններ հաստատելով, ստեղծում են ամբողջի մասերը: Հետևաբար, մասը ելակետային տարր չէ, քանի որ ի տարբերություն տարրերի՝ օժտված է նոր հատկանիշներով և ամբողջի կազմում ձեռք բերած առանձնահատուկ գործառույթներով, այսինքն՝ պայմանավորված լինելով ամբողջով՝ այն նաև որոշակի ներքին զարգացումների արդյունք է: Այսպես օրինակ՝ *քար* բառի ելակետային տարրերն են *ք*, *ա*, *ր* հնչույթները, որոնք իրար միջև հաստատված կապերի շնորհիվ վերածվում են ամբողջի (բառի) մի մասի (ձևույթի): Բառի մեջ հնչույթների այդ կապակցությունը (*քար*-) տվյալ դեպքում հանդես է գալիս արդեն իբրև արմատական ձևույթ (ամբողջի մաս), քանի որ այդ ամբողջի կազմում ձեռք է բերում նոր հատկանիշներ (իմաստ, անվանողական դեր, առնչություն նույնարմատ բառերի հետ՝ *քարեղեն*, *քարային*, *քարագործ*, *քարակերտ*), այսինքն՝ այնպիսի հատկանիշներ, որոնցից *ք-ա-ր* կապակցությունը զուրկ է հնչյունական մակարդակում: *Քար*- ձևույթի հիշյալ նոր հատկանիշները դրսևորվում են մասերի վրա ամբողջի (բառի) «ներգործման» հետևանքով, իսկ որպես այդպիսի ներգործության միջոց՝ հիմնականում ծառայում են բառի

¹² Տե՛ս **Խ. Բաղիկյան**, Ուսումնական դարձվածաբանական բառարան, Եր., 2002, էջ 94, 549:

հարացույցային և շարույթային կապերը: Ամբողջը (այս դեպքում՝ բառը) ներառում է մասերը, փոխազդեցության մեջ է մտնում նրանց հետ, բայց չի տարրալուծում կամ վերացնում դրանք. բառի կազմում ձևայիններն ըմբռնվում են իբրև բառույթի բաղադրիչներ, իսկ նախադասությունների և բառակապակցությունների կազմում բառը դիտարկվում է որպես շարահյուսույթի մաս (օր.՝ *բնական կարծր քար*, «*Բազալտը հեշտ հղկվող քար է*»): Ձևայինները, ի տարբերություն հնչույթների, ամբողջին (բառին) բնորոշ հատկանիշների կրողն են, և հենց այս իրողության շնորհիվ է լեզվում ապահովվում ընդհանուրի և եզակիի մշտական փոխազդեցությունը:

Ամբողջի (որպես առավել բարդ կառուցվածք ունեցող իրողության) առաջացման ժամանակ մասերի փոխհարաբերությունները հաստատվում են մի քանի գործընթացների ուղեկցությամբ՝ ա) մասերի միջև փոխազդեցական կապերի ստեղծմամբ, քանի որ ամբողջ գոյացնելու ընդունակ են ոչ թե բոլոր տարրերն անխտիր, այլ միայն նրանք, որոնք օժտված են նման կապեր ապահովող որոշակի հնարավորություններով, պայմաններով և որակական բնութագրով, բ) մասերին բնորոշ այն հատկանիշների կորուստով, որոնք ամբողջի կազմավորման համար պարտադիր չեն, գ) ամբողջի այնպիսի նոր հատկանիշների ձևավորմամբ, որոնք պայմանավորված են նրա բաղադրիչ մասերի բնույթով և դրանց միջև առաջ եկած նոր կապերով ու առնչություններով:

Անհրաժեշտ է նշել, որ ամբողջի և մասի, ընդհանուրի և եզակիի փոխհարաբերությունները դրված են լեզվական տեղաշարժերի օրինաչափությունների ըմբռնման հիմքում: Ամբողջի կազմում մասը, բնականաբար, դրսևորում է ոչ թե իրեն հատուկ բոլոր հատկանիշները, այլ սոսկ նրանք, որոնք մասնակցում են տվյալ ամբողջի ձևավորմանը: Մասերի մյուս հատկանիշներն ու առանձնահատկությունները պետք է դիտարկել իբրև չիրացված ներուժ. դրանք համապատասխան պայմաններում կարող են գործուն դառնալ: Ամբողջի ձևավորման մեջ գործուն դեր կատարող և այդ գործընթացին չմասնակցող հատկանիշների առնչություններով պայմանավորված՝ լեզվական տեղաշարժերում տարբերակվում են նույնացման (ամբողջացման) և տարբերակման (տարանջատման) գործընթացները:

Լեզվում տեղի ունեցող ամբողջացման գործընթացների համար հիմք են ծառայում տարրերին բնորոշ *ընդհանուր* հատկանիշները, իսկ *տարբերակիչ* հատկանիշները հանգեցնում են ամբողջի տարրալուծմանը՝ պայմանավորելով տարբերակման ընթացքը: Ամբողջացման և տարանջատման այդ գործընթացների միջև ստեղծվում է որոշակի հակամարտություն, որն էլ հենց դառնում է լեզվական նոր տեղաշարժերի դրսևորման հիմնական խթանը:

Ուշագրավ է այն իրողությունը, որ ամբողջի կազմում ընթացող նույնացման և տարբերակման գործընթացները տարրերի հարացույ-

ցային ու շարույթային զուգորդումների արդյունք են: Հարացույցային մակարդակում տարանջատման գործընթացները հենվում են լեզվական տարրերի *տարբեր* կամ *տարբերակիչ* հատկանիշների, իսկ շարույթային մակարդակում՝ *ընդհանուր* կամ *նույնական* հատկանիշների վրա: Եվ ընդհակառակը, ամբողջացման գործընթացների համար հարացույցային մակարդակում հիմք են ծառայում տարրերի նույնական, իսկ շարույթային մակարդակում՝ տարբեր բնույթները: Իբրև արդյունք՝ լեզվամտածողության հարացույցային կառուցվածքի առանցքը դառնում է լեզվական միավորների նույնությունը, իսկ շարույթային կառուցվածքի կենտրոնը՝ դրանց ինքնատիպ հատկություններն ու հայտանիշները:

Այս առումով ուշագրավ է Մ. Վ. Պանովի տեսակետը, որի համաձայն՝ վերոհիշյալ գործընթացներում կարևոր դեր ունեն հնչույթային միավորները: Ըստ նրա՝ շարույթի սահմաններում հնչյունների գործառույթը բառերի ու ձևույթների տարբերակումն է, մինչդեռ հարացույցի շրջանակներում հնչյունները, ընդհակառակը, բառերի ու ձևույթների նույնացման գործառույթ են ձեռք բերում*:

* **Ծանոթություն:** Հայտնի է, որ յուրաքանչյուր լեզվում հնչյունները կապակցվում կամ հերթագայվում են այն օրենքների համաձայն, որոնք առանձնահատուկ են միայն տվյալ լեզվին: Այսպես օրինակ՝ հայերենի բառակազմում երկու բաղաձայն հնչյունների զուգորդման դեպքում առաջինի հետ պարտադիր հանդես է գալիս **ը** ձայնավորը՝ գոյացնելով բաց կամ փակ գաղտնավանկ (գը-նորդ, ըս-կիզբ են): Բաղաձայնների այլ կարգի կապակցությունները բառակազմի դիրքում բացառվում են: Հնչյունների հերթագայությունը ևս ենթարկվում է որոշակի օրինաչափությունների, օր.՝ մեկուկեսականի կոչվող բառերի երկրորդ վանկի (գաղտնավանկի) **ը** հնչյունը բառի աճման (աճանցման, բառաբարդման, թեքման են) դեպքում հիմնականում սղվում է (օր.՝ արկ(ը)դարկղիկ, մեղ(ը)ր-մեղրածոր, բարձ(ը)ր-բարձրից են): Հնչյունական միավորների (ինչպես նաև լեզվական մյուս միավորների) զուգորդման և հերթագայության կանոնները ամբողջական փոխկապակցված միասնություն են կազմում և պայմանավորված են միմյանցով:

Ի տարբերություն ամեն մի լեզվում գործող հնչյունական յուրահատուկ կանոնների՝ լեզուների համար ընդհանուրն այն է, որ հնչյունական միավորները բոլոր լեզուներում էլ կատարում են երկու կարևոր գործառույթ. դրանք ծառայում են լեզվի իմաստակիր միավորների (ձևույթ, բառ, նախադասություն) կա՛մ սահմանազատմանը, կա՛մ նույնացմանը: Ուստի պատահական չէ, որ հնչյունական միավորների գործառույթը շարույթի սահմաններում բառերի ու ձևույթների տարբերակումն է, իսկ հարացույցի սահմաններում՝ դրանց նույնացումը: Չէ՛ որ եթե հնչաշղթան անպայման պետք է կազմված լինի հնչյունական միա-

վորների տարբեր գուգակցումներից, ապա հնչաշղթայի հատվածները (մի քանի մասերից բաղկացած օղակները) նույնպես պարտադիր պիտի տարբերվեն իրենց կազմով. դա նրանց հիմնական շարույթային հատկանիշն է¹³:

Որևէ X լեզվական միավորի հարացույցային և շարույթային կապերի տարբերություններն արտահայտվում են հետևյալ գծապատկերով.

$nչ-X$	X	$nչ-X$
$nչ-X^1$	X^1	$nչ-X^1$
$nչ-X^2$	X^2	$nչ-X^2$

Հորիզոնական շարքերը ներկայացնում են շարույթները, որոնցում $nչ-X$ և X միավորները կապակցված են: Ուղղահայաց շարքերով արտահայտվում են հարացույցները. $X-X^1-X^2$ միավորները ներկայացված են տարբեր միջավայրերում և դիրքերում (կա՛մ $nչ-X$ -ի, կա՛մ $nչ-X^1$ -ի, կա՛մ $nչ-X^2$ -ի միջև): Եթե X միավորը բառույթ է, ապա շարույթը հանդես է գալիս որպես արտահայտություն, իսկ իբրև հարացույց կարող են դրսևորվել, ասենք, որևէ բառի ոճականորեն տարբեր համանիշները կամ հոլովական, խոնարհման ձևերը (ինչն էլ կոչվում է հարացույց բառիս նեղ իմաստով): Եթե X -ը ձևույթ է, ապա շարույթը բնականաբար բառն է, իսկ հարացույցը՝ նույն արմատը, որը հանդես է գալիս տարբեր ածանցային միջավայրերում: Եթե X -ը հնչույթ է, ապա շարույթը հնչյունակապակցությունն է, իսկ հարացույցը՝ հնչյունների դիրքային հերթագայությունների շարքը¹⁴: X միավորը հստակորեն որոշելի է, եթե տարբերվում է հարևան կից միավորներից և նույնանում է ուղղահայաց միավորների հետ: Այսինքն՝ հորիզոնական ուղղությամբ գործում են վանող ուժերը, որոնք շարույթային հարաբերությունների հիմքն են կազմում, իսկ ուղղահայաց գծով՝ ձգողության ուժերը, որոնց շնորհիվ կազմվում են հարացույցները¹⁵: Այսպիսով՝ շարույթային հարաբերություններում ստացվում են հետևյալ առնչությունները

- բառույթ → արտահայտություն,
- ձևույթ → բառ կազմված ձևայիններից,
- հնչույթ → հնչյունակապակցություն:

Հարացույցային հարաբերություններին բնորոշ առնչակցություններն են

- բառույթ → քերականական ձևեր,
- ձևույթ → արմատական նույն ձևային բառային տարբեր կազմերում,
- հնչույթ → հնչյունների տարբեր դիրքային հերթագայություններ:

Շարույթային առնչությունները հանգեցնում են ավելի բարդ լեզվական միավորների ձևավորմանը՝ ըստ որոշակի կառուցվածքային

¹³ Տե՛ս Սևոբոդով **М. В.** Русская фонетика, М., Просвещение, 1967, էջ 10-11:

¹⁴ Տե՛ս նույն տեղը, էջ 11:

¹⁵ Տե՛ս նույն տեղը:

տիպերի: Հարացույցային մակարդակում առաջանում է լեզվական միավորների նույնություն՝ ա) լեզվական տարբեր միջավայրերում նրանց պարբերական կրկնության և բ) գործառույթների ընդհանրության հիման վրա: Արդյունքում ստեղծվում են հնչույթային, ձևային, բառային տարբեր կարգեր, դասեր, խմբեր, համակարգեր:

Եվ ի վերջո, մասի ու ամբողջի կարգերը լեզվում սերտորեն կապված են նաև **լեզվական մակարդակ** հասկացության հետ, որի միջոցով միայն կարելի է բացահայտել մաս-ամբողջ կառույցների առանձնահատկությունները՝ իրենց ձևերի ողջ բարդությամբ: Հիրավի, լեզվական մակարդակի հասկացությունն արտահայտում է բոլոր պատկերացումները լեզվի՝ իբրև ստորակարգային սկզբունքով կազմված ամբողջական մի համակարգի վերաբերյալ, որը բաղկացած է մի քանի ենթահամակարգերից (մասերից)¹⁶: Լեզվական համակարգի մեջ միավորվում են լեզվի համասեռ միավորները: Կարելի է ենթադրել, որ յուրաքանչյուր կառուցվածքային մակարդակի միավոր կազմված է տարրերից, որոնք միևնույն ժամանակ հանդես են գալիս նաև որպես նախընթաց ավելի պարզ մակարդակի միավորներ: Մակայն լեզվական համակարգի կառուցվածքի այդպիսի ըմբռնումը չի արտացոլում նրա մասերի և ամբողջի միջև գոյություն ունեցող հարաբերությունների ողջ բարդությունը: Իրողությունն այն է, որ հաջորդ մակարդակում ներառված տարրերը, ի համեմատություն նախորդ մակարդակի միավորների, ոչ թե պարզապես ավելի բարդ են կամ ծավալուն են, այլ իրականում չեն հանգեցվում նախընթաց մակարդակի միավորների պարզունակ գումարին ու չարտահայտչական, ոչ էլ բովանդակային առումով*:

Մասի և ամբողջի միջև նույնություն չկա նաև այն դեպքում, երբ դրանք ձևով համընկնում են, օր.՝ համեմատենք **դաս** բառը և **դաս**- հիմնական ձևային, որոնցից առաջինը, ի տարբերություն երկրորդի, ոչ միայն արմատական ձևային է, այլև օժտված է 0 վերջավորությամբ, յուրահատուկ հարացույցային կապերով, գործառույթներով ևն: Բառը հնարավոր չէ մասնատել տարրական միավորների այնպես, որ դրանցից յուրաքանչյուրն ամբողջ բառին հատուկ անվանողական դեր կատարի: Միևնույն ժամանակ այն կարելի է տարանջատել այնպիսի գործառույթներ ունեցող պարզ տարրերի, որոնք անհրաժեշտ են ավելի բարդ մակարդակի միավորի՝ բառի ամբողջացման համար: Ընդհանուր առմամբ, մասերի և ամբողջի առնչությունները լեզվական համակարգում դիալեկտիկական բնույթի են. մի կողմից՝ գործում են լեզվի ողջ

¹⁶ СЕ́ и Солнцев В. М. Язык как системно-структурное образование, М., 1977; Горнунг Б. В. О характере языковой структуры // Вопросы языкознания, 1959, №1, էջ 39-48:

* Մեր հաջորդ ուսումնասիրություններում ըստ լեզվական առանձին մակարդակների (բառային, ձևաբանական, շարահյուսական) առավել մանրամասն և համակողմանի կանոնադաշտանք մաս-ամբողջ հարաբերությունների առանձնահատկություններին և մասնավորապես՝ հիշյալ հարաբերություններով պայմանավորված **մասնականության** իմաստի լեզվական տարատեսակ դրսևորումներին:

համակարգի՝ որպես մի ամբողջական բարդ գոյացության ձևավորման միասնական սկզբունքները, մյուս կողմից՝ լեզվի յուրաքանչյուր կառուցվածքային մակարդակ ձևավորվում է համաձայն սեփական օրենքների:

Որպես լեզվական համակարգի կենտրոնական միավոր և որպես կառուցվածքային բարդ ամբողջություն՝ բառը հնչույթին և ձևույթին միանգամայն տարբեր ձևերով է առնչվում: Տարբեր կերպ են իրականացվում նաև բառի բաղադրումը ձևույթների միջոցով և նախադասության կառուցումը բառերի միջոցով: Լեզվի յուրաքանչյուր կառուցվածքային մակարդակ օժտված է իրեն բնորոշ կառույցներով և ստորադիր մակարդակի միավորների հետ համակցման կանոններով: Այսուհանդերձ, մասերի և ամբողջի, բարձր և ցածր մակարդակների միավորների միջև կապը, իհարկե, գոյություն ունի, թեև այն չի դրսևորվում իբրև դրանց պարզունակ հանրագումար: Եթե նման կապ գոյություն չունենար, ապա իրականում հնարավոր չէր լինի խոսել լեզվաբանության մեջ արդեն հայտնի այն առնչությունների մասին, որոնք առկա են հնչյունաբանության և ձևույթաբանության, ձևույթաբանության և ձևաբանության, ձևաբանության և շարահյուսության միջև:

Այսպիսով՝ ամբողջի և մասերի խորքային կապերի վերհանումն ու նկարագրությունը դրված են ժամանակակից համակարգային լեզվաբանության հիմքում, որի ուսումնասիրության առաջնային խնդիրների շարքում առանձնացվում են լեզվական միավորի հիմնահարցը, լեզվական միավորների առնչությունների իմաստավորումը ըստ շարույթային և հարացույցային առանցքների հարաբերության, դրանց համակարգային կապերի ու շեղումների տարբերակայնության ներուժի (պոտենցիալի) բացահայտումը ևն:

ГОАР НЕРСЕСЯН – Языковые особенности отношений части и целого. – В статье рассматриваются языковые проявления философских категорий части и целого, считающихся фундаментальными понятиями познания мира человеком. Отношения часть-целое выделяются довольно сложным характером и обусловлены не только проблемами соотношений языковых систем и элементов - принадлежащих последним, но и вопросами классификации и категоризации этих элементов в соответствующие системы. Исследуются процессы разъединения и целостности - поставленных в основе восприятия закономерностей языковых изменений и являющихся результатом парадигматических и синтагматических сочетаний элементов. Рассматривается также тесная связь отношений часть-целое с понятием языкового уровня, с помощью которого лишь возможно выявление особенностей структур часть-целое - со всей сложностью их форм.

Ключевые слова: категоризация, когнитивная лингвистика, холизм, меризм, часть и элемент целого, тождественные свойства, дифференциальные признаки, парадигматические и синтагматические связи, языковой уровень

GOHAR NERSESYAN – *Linguistic Features of Part-Whole Relations.* – The given article examines the linguistic manifestations of the philosophical categories of part and whole, which are considered to be among the fundamental concepts of human life perception. The latter are characterized by their complex nature and conditioned not only with the problems of the relation between linguistic systems and their elements, but also with the matters of organization in the corresponding systems and regulation. The author touches upon the processes of integration and separation that are in the bases of understanding the laws of linguistic shifts, being the result of paradigmatic and syntagmatic parallelizations of elements as well as the close connection of part-whole relations and the concept of language level through which only the peculiarities of part-whole structures with all the complexity of their forms can be revealed.

Key words: *ordering, cognitive linguistics, holism, merism, part and element of the whole, identical features, distinctive features, paradigmatic and syntagmatic connections, language level*